ած Արմենիա» ՓԲԸ
015 Երևան
աավորիչ Գ. 9
Երևան Պլազա» բիզնես կենտրոն
www.orangearmenia.am

Ձեզ կօգնեն հետևյալ հեռախոսահամարներով
Օրանժ հեռախոսահամարից՝ 555
այլ հեռախոսահամարից՝ +374 55 000 555
էլ. փոստ՝ contact-centre@orangearmenia.am

Բաժանորդային Պայմանագիր / Subscription Agreement No 2028708

Ինտերնետ Հիմա USB մոդեմի տրամադրման պայմաններ / Internet Now USB modem provision terms

Ինտերնետ Հիմա USB մոդեմի մոդելը՝ ZTE MF 680 / Internet Now USB modem model: ZTE MF 680

Մոդեմի գինը խթանիչ առաջարկից դուրս՝ 50000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ / Modem price outside of the promotional offer 50000 AMD, VAT included

Մոդեմի գինը խթանիչ առաջարկի շրջանակում (Մոդեմի համար կանխավճար)՝ 1ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ / Modem price within the promotional offer (prepayment for the Modem) 1AMD, VAT included

Հեռախոսահամար/MSISDN 95969042
SIM քարտի համարը/ SIM card number 89374101202031481172

Կազմակերպության /Company Name: ՀՀ Կառավարության Աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ
Կազմակերպաիրավական ձևը/Juridical form:
Պետ. գրանցման տվյալներ/ State Registration Data: 01Բ000945
ՀՎՀՀ /Tax code: 02505554
Հեռ. / Phone.: 374.
Հասցե/Address:

Ընկերության Տնօրեն / Company Director
☑Ար/M ☐Իգ/F
Անուն,ազգանուն/Name, surname: Սարգիս Բաղինյան
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ/ ID details: AH 0512106 06/12/2007 005
Հեռ. / Phone.:

Ընկերության լիազորված անձ /Company Representative
☑Ար/M ☐Իգ/F
Անուն,ազգանուն/Name, surname: Աշոտ Ավետիսյան
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ/ ID details: 002055127

Բաժանորդագրման տեսակը/Subscription type
Ինտերնետ Հիմա/Internet now
Սակագնային պլան / Tariff plan:
Ինտերնետ Հիմա 11000 / Internet Now 11000

Որպես «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Օրանժ) կողմից իրականացվող խթանիչ առաջարկի մաս Օրանժը բաժանորդին (այսուհետ՝ Բաժանորդ կամ Դուք) է հանձնում վերոնշյալ մոդեմը (այսուհետ՝ Մոդեմ)՝ սույնով սահմանված պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ)՝

1. Մոդեմը Ձեզ հանձնելու պահին Դուք պարտավորվում եք վճարել Մոդեմի համար կանխավճար՝ սույն Պայմաններում սահմանված չափով:
2. Մոդեմի կորստի կամ վնասվածքի ռիսկը փոխանցվում է Ձեզ՝ այն Ձեզ հանձնելու պահից: Ձեր կողմից Մոդեմը շահագործման հրահանգներին ոչ համապատասխան օգտագործելու դեպքում Օրանժը որևէ պատասխանատվություն չի կրում և Մոդեմը վնասվելու կամ այն կորցնելու դեպքում Դուք պարտավոր եք փոխհատուցել դրա ամբողջ արժեքն Օրանժին անմիջապես, բայց ոչ ուշ, քան Օրանժից նման պահանջ ստանալու պահից 10 (տաս) օրվա ընթացքում:
3. Մոդեմի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է Ձեզ՝
- սույն Պայմանների համաձայն 12 (տասներկու) ամիսների ընթացքում Բաժանորդային Պայմանագրով սահմանված Օրանժի Շարժական Ինտերնետ Ծառայության և սույն Պայմաններով սահմանված կամ ավելի բարձր սակագնային պլանի բաժանորդ

ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ/
ORANGE ARMENIA CJSC
Վաճառքն իրականացնող ներկայացուցչի անունը, ազգանունը և ստորագրությունը/
Sales Representative's Name, Surname and Signature________________________
Վաճառքի կետ/Point of sales ORANGE ARMENIA CJSC
Վաճառքի կետի հասցե/ Point of sales address____

Բաժանորդի/Լիազորված անձի անունը, ազգանունը /Subscriber's/Representative's Name and Surname Աշոտ Ավետիսյան
Բաժանորդի/ Լիազորված անձի ստորագրությունը/ Subscriber's/Representative's Signature ____________

Ամսաթիվ/Date 20/06/2014
Էլ. Փոստ/E-mail ______________________

...նժ Արմենիա» ՓԲԸ
...0015 Երևան
...ասավորիչ Գ. 9
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
www.orangearmenia.am

Ձեզ կօգնեն հետևյալ հեռախոսահամարներով
Օրանժ հեռախոսահամարից՝ 555
այլ հեռախոսահամարից՝ +374 55 000 555
էլ. փոստ՝ contact-centre@orangearmenia.am

մնալու պարտավորությունը պատշաճ կատարելուց հետո՝ Մոդեմի համար վճարված կանխավճարի արժեքով՝ առանց լրացուցիչ վճարի, կամ

- սույն Պայմաններով սահմանված Մոդեմի խթանիչ առաջարկից դուրս գնի և Մոդեմի համար վճարված կանխավճարի տարբերությունը կամ հրաժարագինը վճարելուց հետո:

4. Սույն Պայմաններով սահմանված խթանիչ առաջարկից օգտվելու և հատուկ պայմաններով Մոդեմը ձեռք բերելու համար, իսկ Մեկ տարի 20ԳԲ և 1ԳԲ կամ Մեկ տարի 40ԳԲ և 1ԳԲ սակագնային պլաններից մեկի բաժանորդ լինելու դեպքում՝ այդ սակագնային պլանից օգտվելու համար՝ սույնով Դուք պարտավորվում եք մնալ Բաժանորդային Պայմանագրով սահմանված Օրանժի Շարժական Ինտերնետ Ծառայության և սույն Պայմաններով սահմանված կամ ավելի բարձր սակագնային պլանի բաժանորդ 12 (տասներկու) ամիսների ընթացքում: Դուք համարվում եք նշված պարտավորությունը պատշաճ կատարած, եթե 12 (տասներկու) ամիսների ընթացքում մնացել եք Բաժանորդային Պայմանագրով սահմանված Օրանժի Շարժական Ինտերնետ Ծառայության և սույն Պայմաններով սահմանված կամ ավելի բարձր սակագնային պլանի բաժանորդ և ամբողջությամբ վճարել եք 12 (տասներկու) ամիսների ամսավճարները՝ համաձայն սակագնային պլանի՝ հաշվարկված սույն Պայմանները ստորագրելու օրվան հաջորդող ամսվա 1-ից: Նշված պարտավորության ստանձնումը և կատարումը համարվում է սույն Պայմաններով սահմանված խթանիչ առաջարկից օգտվելու նախապայման:

5. Դուք պարտավոր եք Օրանժին վճարել Մոդեմի խթանիչ առաջարկից դուրս գնի և Մոդեմի համար վճարված կանխավճարի տարբերությունը կամ հրաժարագին՝ 50000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև տուգանք՝ 1000 ՀՀ դրամի չափով և մատուցված Շարժական Ինտերնետ Ծառայությունների համար Ձեր ունեցած պարտքը, եթե մինչև 12 (տասներկու) ամիս Օրանժի Բաժանորդ մնալու պարտավորության ժամկետը լրանալը՝

- Ձեր կամ Օրանժի նախաձեռնությամբ Բաժանորդային Պայմանագիրը լուծվել է Բաժանորդային Պայմանագրով կամ օրենքով սահմանված կարգով, անկախ նման լուծման պատճառներից, կամ
- Ձեր կողմից ընտրվել է սակագնային պլան, որի ամսավճարը ցածր է 10500 ՀՀ դրամից:

6. Մեկ տարի 20ԳԲ և 1ԳԲ կամ Մեկ տարի 40ԳԲ և 1ԳԲ սակագնային պլաններից մեկին բաժանորդագրված լինելու դեպքում բացի սույն Պայմանների 5-րդ կետում սահմանված վճարումներից, Դուք պարտավոր եք նաև վճարել տուգանք՝ 8000 ՀՀ դրամի չափով, եթե մինչև 12 (տասներկու) ամիս Օրանժի Բաժանորդ մնալու պարտավորության ժամկետը լրանալը՝

- Ձեր կամ Օրանժի նախաձեռնությամբ Բաժանորդային Պայմանագիրը լուծվել է Բաժանորդային Պայմանագրով կամ օրենքով սահմանված կարգով, անկախ նման լուծման պատճառներից, կամ
- Ձեր կողմից ընտրվել է սակագնային պլան, որի ամսավճարը 8500 ՀՀ դրամից ցածր է:

7. Մոդեմի ներբեռնման և վերբեռնման հնարավոր տեսական առավելագույն արագությունը՝ համաձայն Մոդեմի տեխնիկական նկարագրի, Օրանժի ցանցում տեսականորեն հասանելի է միայն Ինտերնետ Հիմա 11000, Ինտերնետ Հիմա 20000, Մեկ տարի 20ԳԲ և 1ԳԲ, Մեկ տարի 40ԳԲ և 1ԳԲ սակագնային պլաններին բաժանորդագրվելու դեպքում, եթե հետագայում այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից:

8. Սույնով Դուք անվերապահորեն ընդունում եք, որ 10500 ՀՀ դրամից ցածր ամսավճարով սակագնային պլանի անցնելու դեպքում Մոդեմի ներբեռնման և վերբեռնման հնարավոր առավելագույն տեսական արագությունը հասանելի չի լինի և Ծառայությունը կմատուցվի ընդհանուր հիմունքներով, եթե հետագայում այլ բան չի սահմանվում Օրանժի կողմից:

9. Բաժանորդային Պայմանագիրը Ձեզ հետ կնքված է անորոշ ժամկետով: Սույն Պայմաններում նշված Օրանժի Բաժանորդ մնալու պարտավորության ժամկետը լրանալուց հետո Բաժանորդային Պայմանագիրն ավտոմատ չի լուծվում և շարունակում է գործել, եթե չի լուծվում Ձեր կամ Օրանժի կողմից Բաժանորդային Պայմանագրով կամ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

10. Մոդեմի համար տրամադրվում է արտադրողի երաշխիք՝ Մոդեմին կից տրամադրվող փաստաթղթերին համապատասխան:

11. Մոդեմը համատեղելի է միայն Օրանժի կողմից մատուցվող Ծառայությունների և/կամ SIM Քարտերի հետ:

12. Սույնով Դուք անվերապահորեն հաստատում եք, որ Դուք ծանոթացել եք Մոդեմին, դրա նկարագրին, շահագործման կանոններին ու պայմաններին և Մոդեմի ու դրա օգտագործման վերաբերյալ ստացել եք անհրաժեշտ, պատշաճ և ամբողջական բացատրություն ու տեղեկություն, Մոդեմը ստացել եք պատշաճ և աշխատանքային վիճակում, բոլոր փաստաթղթերով և շահագործման կանոններով:

13. Սույնով Դուք հաստատում եք, որ ստացել եք ամբողջական տեղեկատվություն Օրանժի ցանցի ծածկույթի մասին, որտեղ տեսականորեն հասանելի է Մոդեմի ներբեռնման և վերբեռնման հնարավոր առավելագույն տեսական արագությունը՝ համաձայն Մոդեմի տեխնիկական նկարագրի:

14. Սույն Պայմաններն ուժի մեջ մտնելու պահից Ձեր Բաժանորդային Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Ինտերնետ Հիմա USB Մոդեմի տրամադրման պայմանները (Ինտերնետ Հիմա USB մոդեմ հատուկ պայմաններով)/Հավելված (Ինտերնետ Հիմա USB Մոդեմ հատուկ պայմաններով) համարվում են դադարած և Դուք ազատվում եք դրանով նախատեսված տույժերի և տուգանքների վճարման պարտավորությունից: Սույն Պայմանները ստորագրելու պահին Ձեզ նախկինում տրամադրված մոդեմը ենթակա է վերադարձման ընդունման-հանձնման ակտի հիման վրա:

15. Եթե սույն Պայմանները ստորագրելու պահին Դուք հանդիսանում եք Մեկ տարի 20ԳԲ և 1ԳԲ կամ Մեկ տարի 40ԳԲ և 1ԳԲ սակագնային պլաններից մեկի Բաժանորդ՝ Ձեր կողմից նախկինում ստանձնած 12 ամիս Օրանժի բաժանորդ մնալու պարտավորությունը սույն Պայմաններն ուժի մեջ մտնելու պահից համարվում է դադարած և Դուք ազատվում եք դրանով նախատեսված տույժերի և տուգանքների վճարման պարտավորությունից:

Սույն Պայմաններն ուժի մեջ են մտնում ստորագրման պահից:
Սույն պայմանները հանդիսանում են Բաժանորդային Պայմանագրի անբաժանելի մասը:

ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ/
ORANGE ARMENIA CJSC
Վաճառքն իրականացնող ներկայացուցչի անունը, ազգանունը և ստորագրությունը/
Sales Representative's Name, Surname and Signature ______________________
Վաճառքի կետ/Point of sales ORANGE ARMENIA CJSC
Վաճառքի կետի հասցե/ Point of sales address ____

Բաժանորդի/Լիազորված անձի անունը, ազգանունը /Subscriber's/Representative's Name and Surname Աշոտ Ավետիսան
Բաժանորդի/ Լիազորված անձի ստորագրությունը/
Subscriber's/Representative's Signature ____________

Ամսաթիվ/Date 20/06/2014
Էլ. Փոստ/E-mail ______________________